

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՆՈՐ ՆՍՏԱՎԱՅԻ ՈՒՆԻ ԲԵՐԴ ՔԱՂԱՔՈՒՄ

04.03.2026 17:13



Տավուշի մարզի Բերդ քաղաքում բացվել է ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի նոր նստավայրը:

Բերդ քաղաքի և հարակից համայնքների շահառուներն այսուհետ հնարավորություն կունենան տեղում ստանալու անվճար իրավաբանական օգնություն՝ ապահովելով արդյունավետ իրավական պաշտպանություն ունենալու իրենց իրավունքը:

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակը շարունակաբար ընդլայնում է իր ներկայությունը մարզերում՝ ապահովելու իրավական աջակցությունը յուրաքանչյուր քաղաքացու համար՝ անկախ բնակության վայրից:

Նշենք նաև, որ Գրասենյակի նստավայրը հիմնվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })